

Վատվայյան Վիկտոր (ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՐՈՇ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԻ
ԲԱՐԲԱՌԻՆ

Վանի բարբառը պատկանում է հայ բարբառների *Կը* ճյուղին, ունի երկաստիճան ձայնեղագուրկ բաղաձայնական համակարգ (պ-փ, կ-ք, տ-թ, ծ-ց, ճ-չ), ընդգրկված է արևմտյան խմբակցության Վանի կամ հարավային միջբարբառախմբում:

Հ.Աճառյանի վկայությամբ՝ այս բարբառը եղեռնից առաջ ընդգրկում էր Վանա լճի ողջ արևելյան եզերքը՝ կենտրոն ունենալով Վան քաղաքը՝ շրջակա բազմաթիվ հայ գյուղերով, և տարածվելով հյուսիսում մինչև Դիաղին, հարավում՝ մինչև Մոկս, Ոզմի, Շատախ, արևելքում՝ մինչև Պարսկաստանի սահմանը, իսկ արևմուտքում՝ մինչև Մշո բարբառի տարածման սահմանները¹: Եղեռնի տարիներին հայազրկվեցին հիշյալ բոլոր տարածքները, ջարդերից փրկված հայ բնակչության զգալի մասը ապաստան գտավ Արևելյան Հայաստանում, աշխարհի զանազան անկյուններում²:

20-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ հայ բարբառագետները արձանագրել են հայրենագրկված արևմտյան որոշ բարբառային միավորների գործածությունը Հայաստանում և նրա սահմաններից դուրս³, մինչդեռ Վանի բարբառի գոյության մասին որևէ վկայություն չի բերվել⁴, ավելին՝ ըստ Ա.Գրիգորյանի՝ «Վանի բարբառը մեր *անցյալի* խոշոր բարբառներից մեկն է *եղել*»⁵ (ընդգծումը մերն է – Վ.Կ.)⁶: Սակայն դիտարկումները ցույց են տվել, որ Վանի բարբառի դրսևորումներ կան

¹ Տե՛ս Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, Մոսկվա – Նոր-Նախիջևան, 1911, էջ 140. Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Ե., 2013, էջ 339:

² Տե՛ս Թ.Հակոբյան, *Պատմական Հայաստանի քաղաքները*, Ե., 1987, էջ 238:

³ Տե՛ս Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Ե., 2013, էջ 337, 338, Ա.Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 407, Ա.Գրիգորյան, *Հայ բարբառագիտության դասընթաց*, Ե., 1957, էջ 333, 363, 388-389:

⁴ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 339, Հ.Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1952, էջ 12, Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 384:

⁵ Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 314:

⁶ Մենք ևս միտք ենք հայտնել, որ «Ներկայումս Վանի բարբառը որևէ բնակավայրում ընդհանուր հաղորդակցման միջոց չէ» (տե՛ս Վ.Վատվայյան, *Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ*, Ե., 2016, էջ 50):

Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանում⁷: Հայ լեզվաբանության 11-րդ միջազգային գիտաժողովի մեր զեկուցման մեջ նշել ենք, որ Հրազդանի տարածաշրջանի Լեոնանիստ գյուղի և Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի խոսվածքները ներկայացնում են Վանի բարբառի արդի դրսևորումներ⁸: Հետագա հետազոտությունները մեզ հանգեցրին այն եզրակացության, որ Լեոնանիստից և Վանատուր թաղամասից բացի՝ Վանի բարբառին կարող են վերաբերել Հրազդան քաղաքի Կաքավաձոր և Ջրառատ թաղամասերի խոսվածքները ևս⁹: Նկատենք, որ բոլոր այս բնակավայրերի բնակիչների նախնիները գաղթել են Վանի տարածաշրջանից, շրջակա այլ բնակավայրերից, նաև Խոյից, Մակուից, Մալմաստից, Արծափից և այլն:

Ինչ խոսք, դիտարկվող խոսվածքների ներկա վիճակը չի կարող այս կամ այն բարբառի բնական զարգացման արդյունք համարվել, եթե նկատի ունենանք բնակիչների ծագումնաբանական զանազանությունները, նոր ու տարաբնույթ լեզվական միջավայրը և այլն: Բայց թերևս սխալված չենք լինի, եթե, արձանագրելով որևէ բարբառի էական հատկանիշների ակնհայտ գերակշռությունը և նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ ցանկացած բարբառային միավոր ժամանակի ընթացքում ենթակա է փոփոխությունների և տարածության մեջ դրսևորվում է տարբերակային ձևերով, հիշյալ խոսվածքները վերագրենք տվյալ բարբառին:

Մենք Լեոնանիստ գյուղի և Կաքավաձոր, Ջրառատ, Վանատուր թաղամասերի խոսվածքների հնչյունաքերականական հիմնական հատկանիշները դիտարկում ենք Վանի բարբառի հետ համեմատությամբ, որովհետև այդ խոսվածքները երևան են բերում զգալի քանակությամբ հատկանիշների՝ միայն այդ բարբառին հատուկ համադրություն, որը ներկայացվում է ստորև:

Դիտարկվող չորս բնակավայրերի խոսվածքների համար ընդհանուր են Վանի բարբառի հնչյունական մի շարք էական հատկանիշներ: Այսպես, բոլոր խոսվածքներն ունեն երկբարբառային *է,ռ* հնչյուններ (իրեք, խըմոր), միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ռ*-ից առաջ շրթնային տարրի հավելում (վոտ, վոսպ), *է*-ից առաջ՝ *յ*-ի հավելում (յես, յեզ): Նման հավելումներ, Վանի բարբառի

⁷ Տե՛ս Վ. Կատվայան, *Վանի բարբառի դրսևորումներ ՀՀ Կոտայքի մարզում*, Հայ լեզվաբանության 11-րդ միջազգային գիտաժողով՝ նվիրված Ջոն Գրեպինի հիշատակին, Հիմնադրությունների ժողովածու, Եր., Աստղիկ, 2017, էջ 70-71:

⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 71:

⁹ Թե՛ Վանատուրը, թե՛ Կաքավաձորն ու Ջրառատը նախկինում առանձին գյուղեր են եղել:

օրինաչափություններին համապատասխան, առկա են նաև երկվանկ բառերում (վոխչար, յեղունգ), իսկ բազմավանկ բառերի սկզբում *է, n*-ի դիմաց առկա են *է, օ* ձայնավորներ (երէխա, օղորմի): Փոխառյալ ու բնիկ շատ բառերում, նաև համաձայն Աճառյանի օրենքի, խոսվածքներն ունեն քմայնացած *ա* ձայնավոր (պա՛ն, տա՛ռնալ, ճա՛ռթել, խա՛րիր, հա՛յաթ): Լեռնանիստի խոսվածքն ունի նաև քմայնացած *ու* հնչյուն (տո՛ռ, խե՛րու): Բառասկզբում, բառասկզբի խուլ բաղաձայններից հետո խոսվածքներում զգալի է *ա*-ի որոշ շրթնայնացում¹⁰: Բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղման երևույթը, որ գալիս է դեռևս միջինհայերենյան շրջանից, առկա է բոլոր խոսվածքներում (պա՛ժնել, յե՛ռսուն, ժօղվել): Բառավերջի *ա* ձայնավորը որևէ մասնիկի հավելման դեպքում վերածվում է *է*-ի (պագրի՛շկէն, սրղէս): Լեռնանիստի խոսվածքում առկա են *օ/n*-ու անցման դեպքեր (ուրուրոց, պուլոր, կուրիսել), *ոյ*-ի դիմաց *n*-ի դրսևորումներ (ճըկոթ, լոս, թոլ):

Բոլոր խոսվածքներին բնորոշ է բառասկզբի ձայնեղ հպականների և հպաշփականների դիմաց խուլերի առկայությունը (պէրան, տու, կէլ, ճուր, ծու): Կաքավաձորի, Ջրառատի, Վանատուրի խոսվածքներում բառասկզբում երբեմն հանդիպում են նաև շնչեղ ձայնեղներ (գ'եղ, դ'ուս, ճ'ել), որը բացատրվում է այլ բարբառների ազդեցությամբ: Լեռնանիստի խոսվածքում բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր (մէչ, հա՛ռէչ, շըռչըվել, հեռո՛իս, մառո՛, պաք'ել, տէք'ըր), երբեմն էլ՝ խուլեր (թըռճել, փէճ, իճուցել), մյուս խոսվածքներում հանդիպում են միայն շնչեղ խուլեր: Բոլոր խոսվածքներն ունեն հետնալեզվային քմայնացած պայթականներ (կի՛նի, հառի՛ք, ուզընգ'ան), ընդ որում՝ Լեռնանիստի և Վանատուրի խոսվածքներում այդ քմայնացումը հաճախ այնքան ուժեղ է, որ հպականները վերածվում են հպաշփականների (քու/ջ'ու, ջ'եղացի, գարե>կ'արե/ճարե)¹¹: Լեռնանիստի, նաև Վանատուրի խոսվածքներում հետնալեզվային պայթականը բառամիջում ու բառավերջում *յ* է դառնում հաջորդող բաղաձայնից առաջ (սրղէյներ, օյսըվել, ալլօր, իրեյ մանէթ), *յ* է առկա *նք, նգ* խմբերի դիմաց բառավերջում կամ բաղաձայնից առաջ (ըտոյն, տասիիյ տարեկան), հաճախ էլ՝ անկախ դիրքից (ուրայ, ստոյ, ասիր էյ), *նգն, նկն* հնչյունախմբերի դիմաց առկա է *յն* (երմըյներ, կայնել): Բաղաձայնախորդ դիրքերում համանման իրողություններ առկա են

¹⁰ Ըստ Հ.Աճառյանի՝ Վանի բարբառի *ա*-ն շեշտակիր վանկում արտասանվում է փակ ձևով, ներկայացնում է հայերենի *ա* և *օ* ձայնավորների միջին աստիճանը (տե՛ս Հ.Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Ե., 1952, էջ 14):

¹¹ Ուսումնասիրողները այս հատկանիշը Վանի բարբառում չեն նկատել:

Կաքավաձորի և Ջրառատի խոսվածքներում (մառթիյ, ճըրայ, տայնանք): Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականների դիմաց շփականներ են արձանագրվել բոլոր խոսվածքներում (խըմիշկ, ծասկուկ): Բառասկզբի ձայնավորից առաջ *հ*-ի հավելումը հաճախադեպ է Լեոնանիստի և Վանատուրի խոսվածքներում (հախպուր, հակամա, համբար, հառու, հառեչ), ավելի քիչ է հանդիպում Կաքավաձորի և Ջրառատի խոսվածքներում (հեւօր, հիրես, հընչի, հիրան): Բոլոր խոսվածքներում հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում (խեր, խինգ, խիվանդ, խոր, խօրել, պախել, կ'ախ), օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց առկա է *կ* (կըսամաթ, կըսըր, կազան, կաչաղ):

Բոլոր խոսվածքներին բնորոշ է վերջնականկային շեշտը:

Դիտարկվող խոսվածքների համար ընդհանուր քերականական իրողություններից են *եր*, *ներ* հոգնակերտների հետ նաև այլ մասնիկների առկայությունը (այդպիսիք ավելի բազմազան են Լեոնանիստի խոսվածքում, ինչպես՝ ք, իք, անիք, էրք, ռանք, վանք, ոնք), ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, նաև հասարակ անունների սեռականի ձևավորումը *յ*-ով¹² (Ափօյ, Թաքույ, աֆտօյ, ադէյ), բացառական հոլովի *ց*-ով կազմությունը (հախպըրից, կըլխուց), ներգոյական հոլովի իմաստի՝ հայցական հոլովով կամ սեռականով ու *մեջ* կապով արտահայտումը (քաղաք կապրին, պերնի մէյ), միայն *ն* հոդի առկայությունը և նրա սահմանափակ կիրառությունը (սըրախըն, ճըժերի սօլեր կուրցըվե), ի տարբերություն Վանի բարբառի՝ անորոշ հոդի նախադաս կիրառությունը (մէ մառթ): Որևէ խոսվածք հոգնակի թեք հոլովներում չունի Վանի բարբառի *աց* կազմիչը: *Ու* հոլովումը, անկախ բառի ձևավորումից, որոշ տարածում ունի (ի տարբերություն Վանի բարբառի՝ նաև հոգնակի թվում) Լեոնանիստի և Ջրառատի խոսվածքներում (ճըժուն, ճըժերու, ճոչերու): Այս երկու խոսվածքներում արձանագրվել է *Ոջ* հոլովման առկայություն (կիսրոչ, աներոչ): Հատուկ տեղանունների *Ս* հոլովումը տարածված է Լեոնանիստի, Ջրառատի, Վանատուրի խոսվածքներում¹³ (Ախտիյա, Հերեվնա, Թայչարուխա): Լեոնանիստի և հատկապես Ջրառատի խոսվածքներում անձնական դերանունների տրական հոլովաձևերում արձանագրվել են *ի*, *իկ* հավելվածավոր ձևեր (*ընձի/ընձիկ*, *քեզի/քեզիկ*, *մեզի/մեզիկ*, *ծեզի/ծեզիկ*), Կաքավաձորի և Վանատուրի խոսվածքներում՝ միայն *ի* հավելվածով ձևեր (*ընձի*, *քեզի*, *մեզի*, *ծեզի*): Ջրառատի, Լեոնա-

¹² Այս հատկանիշը Վանի բարբառում չի արձանագրվել:

¹³ Հ.Աճառյանը վկայում է, որ Վանի բարբառում հատուկ տեղանունների բացառականը կազմվում է *ա* վերջավորությամբ (տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 116):

նիստի և Վանատուրի խոսվածքներում գործածվում են տրականի կրճատ ձևեր (Ջրառատում՝ *քե, մե, ծե*, Լեոնանիստում՝ *քե, ծե*, Վանատուրում՝ *քե, մե*): Անձնական դերանվան երրորդ դեմքի ուղղականի *զ* նախդրով ձև ունեն Լեոնանիստի (զինք՝) և Կաքավաձորի (զինք) խոսվածքները, որոնց հատուկ են նաև այս դերանվան տրականի *ուր, ուրանց* ձևերը: Ով դերանվան դիմաց Լեոնանիստը, Կաքավաձորը և Վանատուրը ունեն *վոն*, իսկ Ջրառատը՝ *վորը* ձևերը՝ ի տարբերություն Վանի *վով* ձևի:

Բոլոր խոսվածքներում ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *կը* մասնիկով (կըծեծեն, կաշխատինք՝) : Կաքավաձորի և Վանատուրի խոսվածքներում հանդիպում են նաև անկատար դերբայով (*ոււ*՝ վերջավորությամբ) կազմված ձևեր (չիմ ուզում, կերցընում են), որն անշուշտ գրական արևելահայերենի կամ Արարատյան բարբառի ազդեցության հետևանք է: Լեոնանիստի և Ջրառատի խոսվածքներում միավանկ բայերի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *կու* մասնիկով (կուլիւ, կուտա, կուլեր), ինչպես Վանի բարբառում է: Լեոնանիստի խոսվածքում գործածական են այս բայերի՝ *ի* նախահավելվածով ձևեր (չեն իկյա, չեմ իտա)¹⁴: Լեոնանիստի, Կաքավաձորի, նաև Վանատուրի խոսվածքներում վաղակատար դերբայը, Վանի բարբառի պես, ունի *իը* վերջավորություն (լըսիր, քընիր, էկիր), Ջրառատում՝ *էը* վերջավորություն (պըոծեր): Բոլոր խոսվածքներում հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն (փեճատուկ, կախուկ, վախեցուկ), Լեոնանիստում, ինչպես Վանի բարբառում, հանդիպում են նաև *ած* վերջավորությամբ ձևեր (կայնած, կերած): Լեոնանիստում օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ *եւ, ես, ի, ենք, էք, են*, մինչդեռ մյուս խոսվածքներում եզակի երրորդ դեմքում առկա է *ա* ձև: Ե խոնարհման պարզ բայերի անցյալի հիմքը բոլոր խոսվածքներում սովորաբար անցոյական է¹⁵ (փօխին, պըոնին)՝ ի տարբերություն Վանի բարբառի, որտեղ այն սովորաբար ցոյական է (ճարիցի, խապիցի): Այնուամենայնիվ, Լեոնանիստի խոսվածքում հանդիպում են նաև ցոյական հիմքի դրսևորումներ (խըմեցին): Լեոնանիստի, Կաքավաձորի, Վանատուրի խոսվածքներում *զնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *կաց, մաց*, իսկ Ջրառատի խոսվածքում՝ *կաց /կնաց, մնաց* (Վանի

¹⁴ Այս իրողությանն անդրադառնալով Վանի բարբառի ժխտական խոնարհման նկարագրման ժամանակ՝ Շ.Աճառյանը *ի*-ն համարում է նախդիր (տե՛ս նշվ. աշխ., էջ 186): Մեկ այլ առիթով Աճառյանը նկատում է, որ Վանի բարբառին հատուկ է անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքում միավանկ ձևերում *ի* նախահավելվածի առկայությունը (իպւոց, իթօղ, իւաց) (տե՛ս նշվ. աշխ., էջ 170):

¹⁵ Այս բայերի անցյալի անցոյական հիմքը փաստորեն նույնանում է ներկայի հիմքի հետ:

բարբառում՝ կնաց/կաց, մնաց): Բոլոր խոսվածքներում վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում գուգահեռաբար հանդես է գալիս *ած* վերջավորությամբ դերբայական ձև¹⁶ (թեղ ին մանած = թեղ էին մանել): Ընդհանուր է նաև անցյալ ժամանակաձևերի եզակի առաջին դեմքում հավելական *ւ*-ի գործածությունը¹⁷ (կուկիմ /գալիս էի/, պիրիմ /բերեի/, նըստամ, չիմ թըխե): Անցյալ կատարյալը բոլոր խոսվածքներում ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ (պիրեց, ճառթեց, նըստամ, չըքրնանք): Բոլոր խոսվածքներին բնորոշ է դիմավոր ձևերից առաջ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձևի լրացուցիչ կիրառությունը՝ տրամաբանական շեշտ կրող բառն ընդգծելու համար (լեզուն ի կըխառցուն, ինչ ա կասեն). այս իրողությունը ավելի բնորոշ է Մշո բարբառին, իսկ Վանի բարբառում քիչ է հանդիպում (օր.՝ Կիմնա թե փեւէն *ի կուկիւ*): Դիտարկվող միավորները չ բայական ածանց չունեն: Լեռնանիստի խոսվածքում, ինչպես Վանի բարբառում, պատճառական ածանցն է՝ *ուց/ցուց* (իճուցել, փախցուցել), մյուսներում՝ *ցըն* (հիճըցընել, նըստըցընել, կայնըցընել): Բոլոր խոսվածքների առանձին ժամանակաձևերում պատճառական բայերը հանդես են բերում *ու* խոնարհիչ (պախկըվցո՛ւ, սօվըոցու, լօխկըցում, լօխկըցո՛ւ)¹⁸: Լեռնանիստի, Կաքավաձորի խոսվածքներում գործածական է *կօ* հաստատական մասնիկը¹⁹: Այս երկու խոսվածքներում դիտվել է սովորաբար հետադաս կապի նախադաս կիրառություն (խէտ իրար, խըտ իրար)²⁰:

Ինչ խոսք, դիտարկվող խոսվածքները չունեն Վանի բարբառում անցյալ դարի կեսերին արձանագրված մի շարք հատկանիշներ, ինչպիսիք են հոգնակերտ որոշ մասնիկների գործածությունը (հ'տեր, ք'տեր, էստար, տար, վեր), սեռական հոլովի՝ որոշյալ հոդ ստանալը, հոգնակի թվում *աց* վերջավորության գործածությունը, անորոշ հոդի հետադաս կիրառությունը, թուրքերենից փոխառյալ թվականների գործածությունը, դերանվան *ձի*, *ձիկ*, *զի*, *զիկ*, *վով* և այլ ձևերի կիրառությունը, անցյալի ցոյական հիմքը և այլն: Իհարկե, դրանց որոշ մասի բացակայությունը կարող է բացատրվել ժամանակի գործոնով, իսկ մյուս մասն էլ՝ շրջակա

¹⁶ Այս իրողությունը Վանի բարբառում չի արձանագրվել:

¹⁷ Հ.Աճառյանը նկատել է, որ Վանի բարբառի գյուղական տարբերակներում անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում առկա է *ւ* հավելված (տե՛ս նշվ. աշխ., էջ 160):

¹⁸ Ըստ Հ.Աճառյանի՝ գյուղական վայրերում գործածական *փախցում*, *խարցում* տիպի ձևեր (տե՛ս նշվ. աշխ., էջ 182):

¹⁹ Հ.Աճառյանը արձանագրել է Վանի բարբառում *գյօ* (ահա, ահաւասիկ) մակբայի առկայությունը (տե՛ս նշվ. աշխ., էջ 199):

²⁰ Նման կիրառությունները Վանի բարբառին խորթ չեն՝ վեր կ'ըլխուտ, խե չամուռին, մէչ քաղաք՝ (տե՛ս նշվ. աշխ., էջ 198):

բարբառների ազդեցությամբ: Մինչդեռ խոսվածքները ներկայացնում են շատ կարևոր հատկանիշների այնպիսի համակցություն, որով կարող է բնութագրվել միայն Վանի բարբառը: Մասնավորապես, նկատի ունենք հնչյունաքերականական հետևյալ հատկանիշները՝ երկաստիճան ձայնեղագուրկ բաղաձայնական համակարգ, բառասկզբի խլացած բաղաձայններից հետո քմայնացած ձայնավորի առկայություն, քմայնացած հետնալեզվային հպականների գործածություն, բաղաձայնանախորդ դիրքերում հետնալեզվային հպականների, *նք*, *նգ* խմբերի վերածում *յ*-ի, հինհայերենյան *հ*-ի դիմաց բոլոր դիրքերում *խ*-ի առկայություն, բառասկզբում օտար բառերի *ղ*-ի դիմաց *կ*-ի գործածություն, միայն *ն* որոշիչ հոդի գործածություն, անձնական դերանունների տրականի կրճատ ձևերի առկայություն, *Կը* ճյուղի պատկանելություն, հարակատարի *ուկ* և վաղակատարի *իք* (եր) վերջավորությունների առկայություն և այլն: Այսպիսով, չնայած դիտարկվող խոսվածքները որոշ դեպքերում հեռացել են Վանի բարբառից, սակայն դրանք իրենց հիմնական հատկանիշներով, այնուամենայնիվ, պետք է համարվեն Վանի բարբառի դրսևորումներ, մանավանդ որ դիտարկվող խոսվածքների՝ Վանի հատկանիշներից տարբերությունների քանակը երկու տասնյակի չի հասնում Գ.Զահուկյանի բազմահատկանիշ դասակարգման 100 հատկանիշների շրջանակում: Հավելենք, որ դիտարկվող միավորներից, այնուամենայնիվ, առանձնանում է Լեոնանիստի խոսվածքը, որն ավելի հարազատորեն է պահպանել Վանի բարբառի հատկանիշները, իսկ մյուսները հանդես են բերում որոշ զանազանություններ՝ պայմանավորված տարբեր ազդեցություններով ու գործոններով: Բացի այդ, եթե Լեոնանիստում բնակչության խոսքը հիմնականում համասեռ է, ապա նկարագրված լեզվավիճակը մյուս բնակավայրերում բնակչության տարբեր շերտերին հավասար չափով հարազատ չէ:

Նկատենք նաև, որ Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանի որոշ գյուղերի խոսվածքներում, որոնց բնակիչների մեջ այս կամ այն չափով կան Վանի տարածաշրջանից գաղթածների սերունդներ, նույնպես արձանագրվել են Վանի բարբառին բնորոշ հատկանիշներ, սակայն դրանք այդ խոսվածքներում գերակշռող չեն, զուգորդվում են այլ բարբառների հատկանիշներով, շատ դեպքերում էլ արևմտյան բարբառներին բնորոշ ընդհանուր իրողություններ են: Մասնավորապես՝ Գեղադիր գյուղի խոսվածքում զուգորդվում են Վանի և Արարատյան բարբառներին բնորոշ հատկանիշներ (օրինակ՝ երկաստիճան ձայնեղագուրկ բաղաձայնական համակարգ, բայց և՛ շնչեղ ձայնեղների մասնակի առկայություն, *հ*-ի դիմաց *խ*, բայց նաև՝ *հ*, բառասկզբի օտար բառերի *ղ*-ի դիմաց՝

ղ, հազվադեպ՝ նաև *կ*, քմայնացած հետնալեզվայինների առկայություն, բայց դրանց, ինչպես նաև *նք*, *նգ*-ի դիմաց *յ*-ի գործածության բացակայություն, *ը* և *ն* որոշիչ հոդերի կիրառություն, *Ում* ճյուղի պատկանելություն, բայց երբեմն *կը* մասնիկով ներկայի գործածություն, *ը*-ով վաղակատար, *ուկ*-ով հարակատար, պատճառականի *ցըն* ածանց և այլն): Գրեթե նույն կարգի պատկեր են ներկայացնում Ջովաշենի (գուգորդվում են Մշո, Արարատյան և Վանի բարբառների հատկանիշներ), Կաթնաղբյուրի (գուգորդվում են Արարատյան, Մշո, Վանի և Խոյի բարբառների հատկանիշներ) և Ողջաբերդի (գուգորդվում են Վանի և Արարատյան բարբառների հատկանիշներ) խոսվածքները: Հասկանալի է, որ խառը տիպի այս խոսվածքները, ի տարբերություն նախորդների, Վանի բարբառի դրսևորումներ համարվել չեն կարող:

Виктор Катвалян, Отношение некоторых говоров Котайкской области к Ванскому диалекту.- Говоры села Лернанист, кварталов Какавадзор, Джрарат и Ванатур города Раздан представляют совокупность нескольких признаков, которой может характеризоваться только Ванский диалект. Надо думать, что имеем дело с проявлениями Ванского диалекта, тем более, что разница количества признаков рассматриваемых диалектов от Вана не достигает двух десятков в рамках 100 признаков многопризнаковой классификации Г.Джаукяна.

Viktor Katvalyan, The Relation of Some Speeches of Kotayk Region to the Van Dialect.- The speeches of the village of Lernanist and the districts of Kakavadzor, Jrarat and Vanatur in the city of Hrazdan represent a combination of several features that are considered to be characteristic of the Van dialect only. One must think that we are dealing with the manifestations of the Van dialect, especially when the difference in the number of features of the considered speeches from the Van dialect does not exceed twenty from 100 ones listed in the table of G. Dzhaukian's multi-feature classification.